«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

___ _____ 2024 թվականի N _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1174-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի <<Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին>> N 1174-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
1) հավելվածի 10-րդ կետում <<մեկ>> բառը փոխարինել <<երկու>> բառով.
2) հավելվածի 13-րդ կետի առաջին նախադասությունում <<առաջ՝>> բառից հետո լրացնել <<վարժական հավաքի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում պահեստազորայինների>> բառերը, իսկ <<նպատակով>> բառից հետո լրացնել <<(N 1.1 ձև)>> բառերը.
3) հավելվածի 14-րդ կետի՝
ա. առաջին նախադասությունում <<հիման վրա>> բառերից հետո լրացնել <<(N 1.1 ձև)>> բառերը, իսկ <<դեպքերում>> բառերից հետո լրացնել <<N 1 ձևի համաձայն տրված ծանուցման հիման վրա>> բառերը,
բ. երկրորդ նախադասությունում <<կամ ծառայողական>> բառերը հանել.
4) հավելվածի 30-րդ կետի երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<<Հայտարարվող զինվորական վարժանքների կամ զորավարժությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական կոմիսարիատը զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով պահեստազորայինին ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու համար (N 3.1 ձև), որի հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստազորայինը սահմանված կարգով անցնում է բուժհետազոտում և դրա արդյունքներով անցկացվող միջոցառմանը ներգրավվելու ենթակա ճանաչվելու դեպքում N 3 ձևի համաձայն տրված ծանուցման հիման վրա ուղարկվում է միջոցառման

անցկացման զորամաս՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով։>>.
5) հավելվածի 40-րդ կետի երկրորդ նախադասությունում <<կամ ծառայողական>> բառերը հանել.
6) հավելվածը N 1 և N 3 ձևերից հետո համապատասխանաբար լրացնել N 1.1 և N 3.1 ձևերով՝ համաձայն ձև 1-ի և 2-ի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան

Ձև 1

«Ձև N 1.1

Քաղաքացի _____
Բնակության վայրը _____
_____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20 թվականի _____ ____ -ից մինչև 20 թվականի _____ ____ -ը անցկացվող վարժական հավաքի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման։
Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին ներկայանալ (ամիսը) (օրը)
_____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝_____՝
վարժական հավաքին ներգրավելու նպատակով Ձեր զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցնելու համար։

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ_____

(զինկոմիսարիատ) (ստորագրությունը,

_____

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

_____

ՍՏԱՑԱԿԱՆ

«____» _____ 20 թվականին զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա՝

_____ :

(անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)

«____» _____ 20 թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում::

ՁԵՎ 2

«ՁԵՎ N 3.1

Քաղաքացի _____

Բնակության վայրը _____

_____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20 թվականի _____ ____ -ից մինչև 20 թվականի _____ ____ -ը կազմակերպվող

_____

(միջոցառման անվանումը)

կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման: Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին ներկայանալ (ամիսը) (օրը)

_____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝_____՝ _____

(միջոցառման անվանումը)

ներգրավվելու նպատակով Ձեր զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցնելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ_____

(զինկոմիսարիատ) (ստորագրությունը,

_____

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

ՍՏԱՑԱԿԱՆ

«____» _____ 20 թվականին զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա՝
_____ :
(անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)

«____» _____ 20 թ.
Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում::